**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ**

**0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5**
**Հեռ. (+37410) 511-703**

**ՎԴ-1-Ե-**
01 ապրիլի 2022թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ տիկին Տաշչյան,*

Սույն թվականի մարտի 28-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է թիվ ՎԴ/6636/05/21 գործն ըստ հայցի Արտյոմ Սեդրակյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ աշխատավարձի հասանելիք գումարները վճարելուն և դրանց հաշվարկը մինչև պարտավորության փաստացի կատարումը շարունակելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի կարգով գործի ենթակայության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Ձեր՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշումը:

Վերոնշյալ որոշմամբ Ձեր կողմից արձանագրվել է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերությունը հանրային կամ մասնավոր որակելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել այն հարցադրմանը, թե Արտյոմ Սեդրակյանի՝ արդարացված լինելու հիմքով ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայություն իրականացնելու հետ կապված աշխատանքում վերականգնված լինելու

պայմաններում, վերջինի և ՀՀ ոստիկանության միջև հարկադիր պարապուրդի հետևանքով չվճարված աշխատավարձը վճարելու հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով հանրային են, թե՝ գործատուի և աշխատողի միջև առաջացող զուտ աշխատանքային իրավահարաբերություններ: Միաժամանակ, ենթակայության վեճի առկայությունը հիմնավորվել է այն փաստարկի վկայակոչմամբ, որ սույն գործով ներկայացված պահանջի ենթակայության հարցը քննության առարկա է դարձել ինչպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի, այնպես էլ ՀՀ վարչական դատարանի կողմից, որոնց կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կապված սույն գործի ենթակայության հարցի հետ, էականորեն տարբերվում են միմյանցից, ուստի անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, անհրաժեշտ է գործն ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ դրա ենթակայությունը որոշելու համար:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից ուղղակիորեն հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված է գործի ենթակայության վերաբերյալ վեճի լուծման իրավասություն: Մինչդեռ, տվյալ դեպքում չի ներկայացվել սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթի վերաբերյալ Ձեր դիրքորոշումը և ըստ այդմ՝ գործի ենթակայության վերաբերյալ անհամաձայնությունը, որով կհաստատվեր ենթակայության վեճի առկայությունը, քանի որ միմյանցից տարբերվող դատական ակտերի գոյությունը դեռևս չի փաստում ենթակայության վեճի առկայության մասին: Ավելին, տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտի տարաբնույթ մեկնաբանման ու կիրառության դեպքում, օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու լիազորությունը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով վերապահված է ՀՀ Վճռաբեկ դատարանին:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ Ձեր կողմից բարձրացված խնդրո առարկա հարցի քննարկումը դուրս է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով վերապահված լիազորությունների շրջանակից, վերադարձվում է թիվ ՎԴ/6636/05/21 գործը:

*Առդիր՝ թիվ ՎԴ/6636/05/21 գործը՝ 1 հատորից (175 թերթ):*

Հարգանքով՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**